

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

1995 թ. հոկտեմբերի 12-ից 14-ը Թբիլիսի այցելեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ ղեկավարությամբ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի: Պատվիրակությանը Թբիլիսիի օդանավակայանում դիմավորեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանը՝ հոգևոր դասի ուղեկցությամբ, Թեմական խորհրդի քարտուղար Վիլլի Գրիգորյանը, Վրաստանի իշխանության ներկայացուցիչներ՝ պառլամենտի խոսնակ պրն. Վախթանգ Գոգուաձեի գլխավորությամբ:

Ժամանելով Թբիլիսի, հյուրերն այցելեցին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին և Ս. Սիոն Մայր տաճար: Նույն օրը հյուրերը հանդիպում ունեցան Վրաստանի պառլամենտի խոսնակ պրն. Վախթանգ Գոգուաձեի և պաշտոնական այլ անձանց հետ, որից հետո հյուրերին ընդունեց Վրաստանի Հանրապետության ղեկավար Էդուարդ Շևարդնաձեն:

Երեկոյան հյուրերը հրավիրված էին Պետրոս Ադամյանի անվան հայկական թատրոն, ուր տեղի ունեցավ հանդիպում հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որտեղ բոլոր հավաքվածներին օրհնության իր խոսքը բերեց Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանը: Ապա հայկական պատվիրակությունը հրավիրվեց Կրծանիսի կառավարական առանձնատուն՝ հանդիսավոր ընդունելության և ընթրիքի, որը կազմակերպված էր պրն. Վ. Գոգուաձեի կողմից:

Հոկտեմբերի 14-ին հյուրերն այցելեցին Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցի և հանդիպում ունեցան առաջնորդ Տ. Գևորգ արքեպիսկոպոսի հետ, այնուհետև այցելեցին Պալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական թատրոն, ուր տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում՝ նվիրված հայ-վրացական դարավոր բարեկամությանը:

Միջոցառման հանդիսավոր մասում ելույթ ունեցավ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանը՝ անդրադառնալով երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը, և մաղթեց, որ հավիտյան շարունակվի այդ բարեկամությունը:

Հայաստան վերադառնալուց առաջ, ի պատիվ պատվիրակության, պառլամենտի խոսնակ պրն. Գոգուաձեի կողմից տրվեց հրաժեշտի մեծ ճաշկերույթ:

ԴԻՎԱՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ